ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի հունվարի 20-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08»

Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Օդային եղանակով նյութերի ցրման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2026 թվականի հունվարի 20-ին ժամը 10:10:13-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2026 թվականի հունվարի 21-ին ժամը 17:30-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1: Ներկայացված պայմանագրի նախագծով սահմանված չեն Ավիացիայի մասին օրենքի և դրանից բխող իրավական ակտերով սահմանված ավիացիայի ոլորտին առնչվող դրույթներ: Հաշվի առնելով, որ մրցույթի առարկան անմիջականորեն կախված է ավիացիային առնչվող գործառույթներին, ուստի խնդրում ենք պարզաբանել, արդյո՞ք մրցույթը հաղթող ընկերությունը կարող է պայմանագրում ավելացնել դրույթներ, որոնք անմիջականորեն կապված են թռիչքների թույլտվությունների ստացմանը, անվտանգությանը և այլն:

Հարցադրում N 2: Արդյո՞ք չեն սահմանվելու որակական չափանիշներ, քանի որ էական տարբերություն կա թե ինչ տիպի տեխնիկայով են իրականացվում աշխատանքները: Ի գիտություն, նշեմ որ միջազգային փորձը վկայում է, որ անօդաչու թռչող սարքերով սովորաբար խիտ անտառային տարածքներ չեն իրականացվում՝ դրանց աշխատանքների ցածր որակական հատկանիշներով պայմանավորված:

Պարզաբանում N 1, 2: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով հրավերի 1-ին մասի 3-րդ բաժնի 3.3 կետը՝ հանձնաժողովը գտնում է, որ հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին:**

Հեռախոս՝ (011) 818 529:
Էլեկտրանային փոստ՝ gnumner@env.am:

«ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով